7033

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Տիգրան Գաբրիելյան

«28» 06 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 098 - 24

Նախաձեռնող՝ **Արտակ Խաչատրյան**
ք. Երևան, Լենինգրադյան 48/1, բնակարան 26

Գործունեությունը՝ **Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի տարածքում հանգստյան գոտու և շվաքարանի կառուցում**
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 098 - 24

«28» 06 2024թ.

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի տարածքում նախատեսվող հանգստյան գոտու և շվաքարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	Արտակ Խաչատրյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի 7,8 կմ թիվ 1 և թիվ 780 հասցեներում քաղաքացի Արտակ Խաչատրյանի կողմից նախատեսում է կառուցել հանգստյան գոտի և շվաքարան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի 12-րդ հոդվածի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները՝ N 20102022-05-0063 /ծածկագիրը՝ 05-049-0352-0015/ և N 20102022-05-0008 /ծածկագիրը՝ 05-049-2067-0021, Սևան համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվությունները՝ N 45, տրված՝ 25.05.2023թ. և N 71, տրված՝ 19.07.2023թ: Նախատեսվող գործունեության կառուցապատման չափորոշիչները սահմանվել են՝ հիմք ընդունելով Սևանի համայնքապետարանի կողմից տրված նախագծման թույլտվության և Կառավարության N 177-Ն, N 1563-Ն որոշումների պահանջները: Համաձայն նախագծային լուծումների՝ կառուցապատումը կատարվելու է «Սևան» ազգային պարկի տարածքում՝ 1905 նիշից բարձր հատվածում:

N 20102022-05-0063 ծածկագրով պետական գրանցման վկայական ունեցող հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնապահպանական, գրանցված իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք, իսկ N 20102022-05-0008 ծածկագրով պետական գրանցման վկայական ունեցող հողամասի նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հանգստի համար նախատեսված, գրանցված իրավունքի տեսակը՝ վարձակալություն: Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ՝ կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Տարածքում առկա են ծառեր՝ 60-70 հատ, որոնք գործունեության իրականացման ընթացքում

պահպանվելու են, չեն հատվելու: Գործունեության տարածքի հողային ծածկույթը ավազային է, տեղ-տեղ առկա է բուսահող: Տարածքն արդեն իսկ ենթարկվել է մարդու ազդեցությանը, քանի որ Սևանա լճի ափամերձ հատվածներն օգտագործվում են որպես հանգստի գոտի: Տարածքում առկա են ինժեներական ենթակառուցվածքներ՝ ջրահեռացման, գազամատակարարաման և էլեկտրամատակարարման համակարգեր: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար: Հանգստյան գոտու և շվագարանի կառուցման համար նախատեսված հողամասերի ընդհանուր մակերեսը կազմում է 14.960 մ²:

Նկարագրական մաս. Նախատեսվում է կառուցել հյուրատներ, հանդերձարան, պահեստային շենք, գրասենյակային տարածք և հանգստյան գոտուն սպասարկող այլ շինություններ: Տարածքում առկա է կիսակառույց շինություն, որը վերանորոգվելու է: Տարածքում շենքերի, շինությունների քանդման, տեղափոխման աշխատանքներ չեն նախատեսվում: Շինությունները ստորգետնյա հարկեր չեն ունենալու: Շահագործման ընթացում հանգստացողների առավելագույն թիվը հանգստյան գոտում կազմելու է 120 մարդ:

Երկհարկանի կցակառույցը բաղկացած է լինելու երեք շարքով՝ 5 հատ երկու հարկանի հյուրատներից: Հյուրատան առաջին հարկում նախատեսվում է խոհանոց և հյուրասենյակ, սանհանգույց, իսկ երկրորդ հարկում՝ մեկ ննջարան և սանհանգույց: Ռեստորանային համալիրի մուտքը լինելու դրսից՝ կլոր ասիճաններով և վերելակով՝ հողից 6 մետր բարձրության վրա: Նախատեսվում է մեծ նախամուտք, մեծ խոհանոց, սանհանգույցներ և մեծ սրահ՝ ամբողջովին պատված վիտրաժներով: Համալիրը երեսապատվելու է մուգ գույնի բազալտե սալիկներով: Կառուցվելու են նաև մեծ և փոքր հյուրատներ՝ թեթև կոնստրուկցիաներով՝ հողից 1,8 մետր բարձրության վրա:

Ըստ նախագծային լուծումների հանգստյան գոտու և շվագարանի կառուցապատման ցուցանիշներն են.

- հողամասերի ընդհանուր մակերեսը՝ 14.960 մ²
- շինությունների կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 1796,04 մ²(12%)
- կանաչապատման մակերեսը՝ 11166,45 մ²(75%)
- գոյություն ունեցող չվերականգնվող կառույցների և ինքնակամ շինությունների մակերեսը՝ 721,53 մ² (5%)

Հանգստյան գոտին լողափնյա գոտի չի նախատեսում՝ ելնելով տարածքի ռելիեֆային առանձնահատկություններից: Երկրորդ հողամասի 1500 մ² հատվածի վրա նախատեսվում է կառուցել ավտոկայանատեղի՝ մոտ 30 մեքենայի համար, որը կանաչապատվելու է գեոտեքստիլով: Ավտոկայանատեղիի տարածքում իրականացվելու է գեոմեմբրանային ցանցապատում, ինչը նույնպես ապահովելու է տարածքի տվյալ հատվածում կանաչ տարածությունը: Տարածքում գտնվող բոլոր շինությունները, բացի ռեստորանային համալիրի շինությունից, իրականացվելու են միաձույլ երկաթբետոնե խաչահատվող ժապավենային հիմքերով և շրջանակային հիմնակմախքային կոնստրուկցիաներով: Նախատեսվող շինությունները գտնվում են սկսած 1906.00-ից մինչև 1913.00 նիշերի վրա:

Շինություններում տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր: Օդափոխությունը կազմակերպվելու է սանհանգույցներում, խոհանոցում և ռեստորանում: Արտաքին լուսավորությունը կազմակերպվելու է գոյություն ունեցող հենասյուներով՝ էլեկտրամատակարարմամբ: Ավտոկայանտեղին նախատեսվում է մոտ 30 մեքենայի համար: Կայանատեղին նախատեսվում է իրականացնել խճով, հողով, գեոմեմբրանային ցանցով, իսկ հարակից ողջ տարածքը լինելու է կանաչ գեոտեքստիլից: Տարածքում, բացի վերը թվարկված կառուցապատման շինություններից, նախատեսվում է նաև մաքրման կայանի տեղադրում: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն վնասի շրջակա միջավայրը:

Շահագործման փուլում ջրամատակարարումն իրականացվելու է տարածքում առկա խորքային հորից՝ համապատասխան ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում:

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար տեղադրվելու է բիոզուգարան, իսկ շահագործման փուլում՝ կենսաբանական մաքրման կայան՝ Եվրոլոս-150: Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական արտադրական ձեռնարկություններից:

Շինարարության ընթացքում իրականացվելու է 265 մետր երկարությամբ կոյուղագծի կառուցում՝ հանգստյան տներից, ռեստորանից դեպի մաքրման կայան, որի արդյունքում կկատարվի մոտ 31 մ^3 ծավալի հողային աշխատանք: Կյուղագիծը միացվելու է մաքրման կայանին: Հանվող հողային զանգվածը (գրունտ) կազմելու է 53,5 մ^3, որն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման և հետլիցքի նպատակով: Իսկ 10 մ^3 բերրի հողն օգտագործվելու է կանաչապատման նպատակով:

Շինարարական տեխնիկայի և սարքավորումների աշխատանքային ժամանակահատվածում կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով: Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով, որը շաբաթական երկու անգամ հաճախականությամբ կհեռացվի տարածքից մատակարար ընկերության կողմից: Գործունեության իրականացման հետևանքով առաջանալու է կենցաղային աղբ, որը կառուցապատման փուլում կազմելու է 3600 կգ/տարի, շահագործման փուլում՝ 15 400 կգ/տարի: Շինարարության փուլում տեղադրվելու են 4 տարբեր չափերի աղբամաններ: Շահագործման փուլում տարածքի աղբահեռացումը կատարվելու է համաձայն՝ Սևանի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի՝ պայմանագրային հիմունքներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Ջրցանի, աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, որը լցվելու է տարածքում գոյություն ունեցող 25 մ^3 տարողություն ունեցող բաքում: Տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում հանգստացողների համար խմելու ջուրը մատակարարվելու է ջրի հորից, համապատասխան ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո: Ջուրը նախատեսվում է նաև արտաքին հրդեհամարման համար: Արտաքին հրդեհամարման համար յուրաքանչյուր կառույցի վրա նախատեսվում հակահրդեհային հիդրանտ, որը տեղադրվելու է շինությունների արտաքին պատերին: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային չտեսակավորված աղբն է՝ 15 400կգ/տարի, շինարարական աղբը՝ 25 մ^3: Կոշտ կենցաղային թափոններ՝ կառուցապատման փուլում՝ 3600 կգ/տարի, շահագործման փուլում՝ 15 400 կգ/տարի մետաղական մասերի մնացորդներ, ալյումինե, պղինձե լարերի թափոններ, որոնք պայմանագրային հիմունքներով կտրամադրվեն լիցենզավորված ընկերությունների: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է Սևանի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից: Նախնական ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն

նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ չեն հայտնաբերվել: Ներկայացվել է բնապահպանական կառավարման պլան, որը պարունակում է շինարարության և շահագործման փուլերում հնարավոր բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումներ, ինչպես նաև մոնիթորինգ՝ ստուգելու շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը նախատեսվող մեղմացնող միջոցառումներին:

Պատճառաբանական մաս. Հանգստյան գոտու շահագործման ընթացքում կենցաղային կեղտաջրերի մաքրման արդյունքում առաջացած ջրերը (98%) օգտագործվելու են կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է «Սևան» ազգային պարկի հետ համաձայնեցված կանապաչատման ծրագրին համապատասխան՝ (11166,45 մ²) տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով:

Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշման պահանջներով՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով իրականացվելու են հատուկ միջոցառումներ՝ բուսատեսակների կենսունակության ապահովման նպատակով դրանք տեղափոխել և վերատնկել առանձնացված հատուկ պահպանման գոտում՝ ազգային պարկի համաձայնությամբ, շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, հնարավորինս նվազեցնել տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

Շինարարության կազմակերպման և շինարարական աշխատանքների ժամանակ նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում իրականացնել պարբերական ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացնել փակ ծածկով մեքենաներով,
- աշխատանքների ավարտից հետո մաքրել բոլոր տարածքները և առաջացած աղբը տեղափոխել համայնքի կողմից հատկացված վայր,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ՝ կահավորված խլացուցիչներով:

Հանգստյան գոտու կառուցման ընթացքում, շինհրապարակում և շինհրապարակի հարևանությամբ, նախատեսվում է իրականացնել մթնոլորտային օդում արտանետումների (փոշի, CO, NO_x) չափումներ, աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ, ինչպես նաև նորատունկ կանաչ գոտու վիճակի մշտադիտարկումներ, որի ընթացքում կպչողականություն չապահովող ծառատեսակները կփոխարինվեն նորերով:

Եզրափակիչ մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ հանգստյան գոտու և շվագարանի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային ծանուցումը և քննարկումներն իրականացվել են Սևան համայնքում: Հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Ծովագյուղ բնակավայրի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում բարձրացված հարցերի պարզաբանումները՝ թափոնների, մաքրման կայանի, շինությունների՝ հողին ամրացման եղանակների վերաբերյալ, ներառվել են լրամշակված հայտի մեջ: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

1. Հողային աշխատանքների իրականացման ընթացքում սահմանել մասնագիտական հսկողություն տարածքում հնարավոր Կարմիր գրքին պատկանող բուսական և կենդանական աշխարհի տեսակների հայտնաբերման, պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության նպատակով՝ համաձայն գործող իրավակարգավորումների:
2. Բացառել որևէ հիմնական շենք-շինությունների կառուցումը մինչև 1905 մետր նիշը՝ համաձայն Կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին որոշման 5-րդ մասի 1-ին կետի և հանգստյան գոտին շահագործել միայն սույն որոշման 11-րդ մասի 7-11-րդ կետերով սահմանված պահանջները կատարելու դեպքում:
3. Անհրաժեշտ է իրականացնել Կառավարության 2002 թվականի N 57 որոշում «Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» որոշմամբ սահմանված պահանջները:
4. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:
5. Պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 12 հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները:
6. Շինարարական աշխատանքների ընթացքում, համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի, որևէ հնագիտական

շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին:

7. Կանաչապատման և բարեկարգման աշխատանքներն իրականացնել՝ «Սևան» ազգային պարկի և Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված նախագծին համապատասխան:
8. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
9. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի /մշտադիտարկումներ/ կառավարման պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացի Արտակ Խաչատրյանի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի 7,8 կմ N 1 և N 780 հասցեներում հանգստյան գոտու և շվաքարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն *Խաչիկ Մարտիրոսյան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ *Հերիքնազ Մկրտչյան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ *Սուսաննա Անտոնյան*